



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/4139/05/20

Նախագահող դատավոր՝ Ռ. Մախմուդյան

Դատավորներ՝

Կ. Բաղդասարյան

Կ. Ավետիսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/4139/05/20**

2024թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող

զեկուցող

Հ. ԲԵԴԵՎՅԱՆ

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ք. ՄԿՈՅԱՆ

2024 թվականի ապրիլի 05-ին

գրավոր ընթացակարգով քննելով «ՖԱՎՈՐԻՏ 19» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝
Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 21.10.2022
թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Ընկերության ընդդեմ ՀՀ
տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (ներկայումս՝
Մրցակցության պաշտպանության հանձնաժողով) (այսուհետ՝ Հանձնաժողով) 05.05.2020
թվականի թիվ 152-Ա որոշումը վերացնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է վերացնել Հանձնաժողովի
05.05.2020 թվականի թիվ 152-Ա որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Զարիկյան) (այսուհետ՝ Դատարան)
14.02.2022 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.10.2022
թվականի որոշմամբ Հանձնաժողովի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի
14.02.2022 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ի պաշտոնե ներկայացուցիչ՝ Լուիզա Հովհաննիսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հանձնաժողովը (ի պաշտոնե ներկայացուցիչ Գեղամ Գևորգյան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, 63-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 25-րդ հոդվածի 1-ին մասը, 27-րդ հոդվածի 1-ին մասը, 29-րդ հոդվածի 1-ին մասը, 145-րդ հոդվածի 3-րդ մասը, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն փաստը, որ վարչական վարույթի ընթացքում Հանձնաժողովը չի ներկայացրել որևէ ապացույց՝ ապրանքը հասարակությանը հասանելի դարձված լինելու վերաբերյալ, չի ձեռնարկել որևէ միջոց դրա հետ կապված ապացույց ձեռք բերելու համար: Հանձնաժողովի վկայակոչած այն փաստարկը, որ վարչական մարմինը խնդրի մասին տեղեկացել է մասնավոր իրավունքի այլ սուբյեկտից, չի կարող բավարար հիմք հանդիսանալ, քանի որ «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ-ն ևս չի ներկայացրել ապացույց, փաստարկ և դիրքորոշում այն մասին, որ ներկայացված ապրանքը ձեռք է բերել իրացման շուկայից: Դեռևս փաթեթավորման փուլում գտնվող ապրանքի նմուշառում անցկացնելը բավարար հիմք և ապացույց չի կարող համարվել՝ հաստատելու այն փաստը, որ փաթեթավորումից հետո ապրանքը ներկայացվել է իրացման: Այն հանգամանքը, որ ապրանքների հետևանք է արվել, փաստում է, որ Ընկերությունը չի հասցրել ապրանքը իրացման և սպառողին, քանի որ կարգադրագրերը տրվել են ներմուծման և փաթեթավորման ընթացքում: Նման պայմաններում ենթադրությունների հիման վրա չէր կարող Ընկերությունը պատասխանատվության ենթարկվել, իսկ վարչական մարմինը չէր կարող հիմնվել կանխավարկածների վրա:

Ապրանքի իրացումը և հասարակության մոլորեցումը հաստատված համարելու համար միայն դրա փաթեթավորումը և սխալ մակնշումը չի կարող բավարար հիմք հանդիսանալ՝ անկախ անձանց կյանքի և առողջության պահպանման հանգամանքի հետ գործ ունենալուց, քանի որ մեկ անձը չի կարող համարվել հասարակություն, և տվյալ անձի ձեռքում ապրանքի հայտնվելը պայմանավորված է եղել մրցակից կազմակերպության դեմ որևէ գործողություն անելու հանգամանքով:

Վերաքննիչ դատարանը սխալ է գնահատել ապացույցները, որի արդյունքում սխալ եզրահանգման է եկել, քանի որ վարչական վարույթում առկա ապացույցներից որևէ մեկը չի փաստում ապրանքն իրացման ներկայացված լինելու հանգամանքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է՝ ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 21.10.2022 թվականի որոշումը՝ օրինական ուժ տալով ՀՀ վարչական դատարանի 14.02.2022 թվականի վճռին:

2.1. Վճռաբեկ բողոքի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ներկայացված պատասխանի հիմնավորումները.

Ընկերության կողմից փաթեթավորվել և շրջանառության մեջ է դրվել ապրանք, որի նմուշը «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է Հանձնաժողովին: Տեսչական մարմնի կողմից ներկայացված փորձաքննության արդյունքների ուսումնասիրությամբ, ինչպես նաև հենց Ընկերության կողմից ներկայացված տեղեկատվությամբ հաստատվել է ապրանքի մեջ ֆեռոցիանիդ նյութի առկայությունը: Տեսչական մարմնի գրությամբ և Հանձնաժողովին ներկայացված ապրանքի նմուշի ուսումնասիրությամբ արձանագրվել է ապրանքի բաղադրության և մակնշման միջև անհամապատասխանություն՝ Ընկերությունը ապրանքի վրա չի մակնշել ֆեռոցիանիդ նյութի առկայության մասին, ինչի արդյունքում Ընկերությանը տրվել է հանձնարարական ապրանքը շուկայից ետ հավաքելու, ի կատարումն որի, ըստ Ընկերության, ապրանքը շուկայից ետ է հավաքվել (այսինքն՝ ապրանքը եղել է շուկայում) և ոչնչացվել, այնուհետև վերջինիս կողմից փոփոխվել է ապրանքի փաթեթավորումը՝ ավելացվել է ֆեռոցիանիդի մասին մակնշումը:

Վերոգրյալից բխում է, որ Ընկերությունը շրջանառության մեջ է դրել ապրանք, որի բաղադրությունը և մակնշումն իրար չեն համապատասխանել, հետևաբար Ընկերության գործողությունները պարունակել են հասարակության մոլորեցման հատկանիշներ:

Մրցակից կազմակերպության մոտ ապրանքի հայտնվելը վկայում է այն մասին, որ ապրանքն Ընկերության կողմից շրջանառության մեջ է դրվել: Հետևաբար, մրցակից կազմակերպության կողմից ներկայացված ապրանքի նմուշը, մասնավոր սուբյեկտի վարքագծի իրավաչափության կանխավարկածի սկզբունքից ելնելով, համարվում է օրինական ճանապարհով ձեռք բերված, քանի որ չկա որևէ ապացույց հակառակի վերաբերյալ:

Հանձնաժողովը խնդրել է ամբողջությամբ մերժել Ընկերության վճռաբեկ բողոքը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ-ն 24.01.2020 թվականին Հանձնաժողովի նախագահին ուղղված դիմումով հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության առևտրի ցանցում հայտնվել է Իրանի Իսլամական Հանրապետությունից ներմուծված երկու տեսակի փաթեթավորված աղ, որոնցից մեկը փաթեթավորում է Ընկերությունը՝ «Աղ յոդացված էքստրա» անվանմամբ, մյուսը փաթեթավորում է «Էկոսոլթ» ՍՊ ընկերությունը՝ «Աղ կերակրի յոդացված» անվանմամբ: Երկու նմուշներն էլ շփոթեցնելու աստիճանի նմանեցված են «Ավանի աղի կոմբինատ»-ի կողմից արտադրվող «Էքստրա» աղի փաթեթին, ինչը կարող է ապակողմնորոշել գնորդին, և դա «Ավանի աղի կոմբինատ»

ՓԲԸ-ի կողմից դիտարկվում է որպես տնտեսական մրցակցության կանոնների խախտում **(հատոր 1-ին, գ.թ. 92):**

2) «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ-ի նշված դիմումի հիման վրա Հանձնաժողովի կողմից հարուցվել է վարույթ:

3) ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պատասխան գրության համաձայն՝ հիմք ընդունելով «Ավանի աղի կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի դիմում-բողոքը և առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3.1 մասով, Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի հրամանների հիման վրա Ընկերությունում (ք. Երևան, Շիրակի փ. 1/68) իրականացվել է ստուգում, որի ընթացքում իրականացվել է ներմուծված և փաթեթավորվող կերակրի աղի նմուշառում և տրվել է «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ լաբորատոր փորձարկման՝ կերակրի աղում յոդի զանգված և կալիումի ֆեռոցիանիդ (E536) ցուցանիշներով: (...) Արձանագրված խախտումները վերացնելու համար տնտեսվարող սուբյեկտների պաշտոնատար անձանց տրվել են «Արտադրանքի իրացումն արգելելու, շուկայից հետ կանչելու, ոչնչացնելու կամ օգտահանելու մասին» կարգադրագրեր: Հետկանչի արդյունքում Ընկերությունում պահեստավորվել է ոչնչացման կամ օգտահանման ենթակա 83 կգ կերակրի աղ **(հատոր 1-ին, գ.թ. 68-69):**

4) ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 05.03.2020 թվականի թիվ 61 ստուգման ակտի համաձայն՝ կերակրի աղ արտադրանքի փաթեթավորման մակնշման մեջ բացակայում են գրառումներ արտադրողի անվանման, կալիումի ֆեռոցիանիդի առկայության մասին, ինչպես նաև նշված է պիտանիության երկու ժամկետ **(հատոր 1-ին, գ.թ. 31):**

5) Հանձնաժողովի 05.05.2020 թվականի «Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 152-Ա որոշմամբ Ընկերության կողմից փաթեթավորված և իրացված «FAVORITE 1000 Գ ԱՂ ՅՈՂԱՅՎԱԾ ԷՔՍՏՐԱ» անվանումով ապրանքի փաթեթավորման վրա ֆեռոցիանիդ (E536) նյութի առկայության վերաբերյալ մակնշումը չկատարելը որակվել է որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ հասարակության մոլորեցում, և որոշվել է օրենքի խախտման համար Ընկերությանը տալ նախազգուշացում **(հատոր 1-րդ, գ.թ. 24-28):**

4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի խախտում, որը խաթարել է

արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք ապրանքի թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) մակնշումն ինքնին բավարար է տվյալ արարքն անբարեխիղճ մրցակցության դրսևորում որակելու համար, եթե բավարար ապացույցների համակցությամբ չի հաստատվում տնտեսվարողի կողմից տվյալ ապրանքն իրացնելու փաստը:

«Սահմանադրության 11-րդ հոդվածով ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

«Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորվում է յուրաքանչյուրի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը, իսկ 86-րդ հոդվածի համաձայն՝ գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանությունը, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողությունը ներառված են տնտեսական ոլորտում պետության քաղաքականության հիմնական նպատակների մեջ:

Միաժամանակ «Սահմանադրության 59-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանադրական մակարդակով ամրագրվել է շուկայում մրցակցության խաթարման առանձին ձևերի՝ շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման, անբարեխիղճ մրցակցության և հակամրցակցային համաձայնությունների արգելքը:

Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիայի 10 bis հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Միության երկրները պարտավոր են Միությունում մասնակցող երկրների քաղաքացիներին արդյունավետ պահպանությամբ ապահովել ոչ բարեխիղճ մրցակցությունից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ոչ բարեխիղճ մրցակցության գործողություն է համարվում մրցակցության ցանկացած գործողություն, որը հակասում է արդյունաբերական և առևտրական գործերում արդար սովորույթներին: Իսկ նշված հոդվածի 3-րդ կետն առանձնացնում է մասնավոր արգելքները.

1) բոլոր գործողությունները, որոնք ընդունակ են որևէ ձևով շփոթություն առաջացնելու ձեռնարկության, մթերքների կամ արդյունաբերական կամ առևտրական գործունեության մրցակցի նկատմամբ,

2) սուտ պնդումները, որոնք առևտրական գործունեություն իրականացնելիս ընդունակ են վարկաբեկելու ձեռնարկությանը, ապրանքները կամ մրցակցի արդյունաբերական կամ առևտրական գործունեությանը,

3) նշումները կամ պնդումները, որոնց օգտագործումը առևտրային գործունեություն իրականացնելիս կարող է հասարակությանը մոլորության մեջ գցել ապրանքների բնույթի, պատրաստման եղանակի, հատկությունների, կիրառման պիտանելիության կամ քանակի վերաբերյալ:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի համաձայն՝ Օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը տարածվում է տնտեսվարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ինչպես նաև վնասել սպառողների շահերը:

Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսվարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է նույն օրենքին, այլ օրենքներին, իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխիղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության գործողություններ են նույն օրենքի 12-15-րդ, 15.1-ին և 16-րդ հոդվածներում թվարկված դեպքերը, ինչպես նաև նույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողություններ:

Վերը նշված նորմերի բովանդակությունից բխում է, որ Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը բացահայտում է անբարեխիղճ մրցակցության բովանդակությունը՝ առանձնացնելով այն հիմնական հատկանիշները, որոնց համակցությամբ պայմանավորված՝ տնտեսվարողի տվյալ գործողությունը կամ անգործությունը որակվում է որպես անբարեխիղճ մրցակցություն: Այդ հատկանիշներն են.

- Օրենքին, այլ օրենքների, իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին հակասությունը,

- մրցակից տնտեսվարող սուբյեկտների միջև, կամ տնտեսվարողի ու սպառողների միջև բարեխիղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքների խախտումը:

Վերը նշված հատկանիշների համակցությունն է տնտեսվարողի այս կամ այն գործողությանը կամ անգործությանը հաղորդում անբարեխիղճ մրցակցության որակ: Անբարեխիղճ մրցակցության պարտադիր հատկանիշ է կամ մրցակից տնտեսվարող սուբյեկտների միջև, կամ տնտեսվարողի ու սպառողների միջև բարեխիղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքների

խախտումը: Այսինքն՝ տվյալ տնտեսվարողի կողմից դրսևորվող անբարեխիղճ մրցակցության ազդեցությունը կրող սուբյեկտներ են կամ վերջինիս մրցակից տնտեսվարողները, կամ սպառողները: Այլ կերպ՝ անբարեխիղճ մրցակցության վարքագիծն ունի իր օբյեկտային կազմը. վերջինս ներառում է կամ տվյալ վարքագիծը դրսևորող տնտեսվարողի մրցակից տնտեսվարող սուբյեկտներին, կամ սպառողին:

Օրենսդիրը, Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրելով անբարեխիղճ մրցակցությանը բնորոշ պարտադիր հատկանիշները, միաժամանակ նույն հոդվածի 4-րդ մասում առանձնացրել է անբարեխիղճ մրցակցության կոնկրետ դրսևորումների որոշակի ոչ սպառիչ շրջանակ: Այն է՝ տնտեսվարող սուբյեկտի կամ նրա գործունեության վերաբերյալ շփոթություն առաջացնելը (12-րդ հոդված), տնտեսվարող սուբյեկտին կամ նրա գործունեությունը վարկաբեկելը (13-րդ հոդված), հասարակությանը մոլորեցնելը (14-րդ հոդված), տնտեսվարող սուբյեկտի համբավը, վարկաբեկքը վնասելը (15-րդ հոդված), անտեղի համեմատություններ կատարելը (15.1-ին հոդված), անբարեխիղճ մրցակցությունը չբացահայտված տեղեկատվության նկատմամբ (16-րդ հոդված):

Հաշվի առնելով Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում անբարեխիղճ մրցակցության բովանդակությունը պայմանավորող պարտադիր հատկանիշների վերը նշված շրջանակը, ինչպես նաև Օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասում «ինչպես նաև նույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողություններ» ձևակերպումը՝ ՀՀ վճարեկ դատարանն արձանագրել է, որ Օրենքի 12-15-րդ, 15.1-ին և 16-րդ հոդվածներում թվարկված՝ անբարեխիղճ մրցակցության բոլոր կոնկրետ գործողությունները (դրսևորումները), այդ թվում՝ հասարակության մոլորեցումը, օժտված են Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում անբարեխիղճ մրցակցության բովանդակությունը պայմանավորող՝ վերը նշված պարտադիր հատկանիշներով: Մասնավորապես, Օրենքի 12-15-րդ, 15.1-ին և 16-րդ հոդվածներում թվարկված՝ անբարեխիղճ մրցակցության բոլոր կոնկրետ գործողությունների (դրսևորումների), այդ թվում՝ հասարակության մոլորեցման, պարտադիր հատկանիշ է այդ գործողության բացասական ազդեցությունը կամ մրցակից տնտեսվարողների, կամ սպառողի նկատմամբ, որպիսի ազդեցությունը դրսևորվում է վերջիններիս հանդեպ բարեխիղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքների խախտմամբ (*տե՛ս, «Սվեթա» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի թիվ ՎԴ/11331/05/18 վարչական գործով Վճարեկ դատարանի 01.02.2023 թվականի որոշումը*):

Ըստ Օրենքի 14-րդ հոդվածի՝ անբարեխիղճ մրցակցության դրսևորում է հասարակության մոլորեցումը: Վերջինս նույն հոդվածի 1-ին մասում բնորոշվում է որպես ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկված ապրանքների վերաբերյալ:

Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով տրված ընդհանուր սահմանմանը զուգահեռ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսվել են հասարակության մոլորեցման առանձին կոնկրետ դրսևորումներ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի իմաստով մոլորեցումը կարող է ծագել ապրանքների գովազդմանը կամ տարածմանը նպաստող միջոցառումների իրականացման ընթացքում, մասնավորապես, տեղի ունենալ ապրանքի

աշխարհագրական ծագման, ինչպես նաև նույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված առանձնահատկությունների նկատմամբ: Մոլորեցում է համարվում նաև ապրանքների որակն անհիմն չափազանցնելը, որակի, քանակի կամ այլ բնութագրերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման), կեղծիքը գովազդատուի անձի վերաբերյալ: Հասարակության մոլորեցում է համարվում նաև ապրանքի արտադրության տարեթվի, ամսվա, օրվա կամ պահպանման ժամկետի, տվյալ ապրանքը արտադրող կամ ներկրող տնտեսվարող սուբյեկտի անվան (անվանման) կամ հասցեի կամ օրենսդրությամբ նախատեսված տվյալների կամ պայմանների վերաբերյալ հայերեն նշումների բացակայությունը կամ օրենքին հակասող նշումների առկայությունը կամ գովազդի մեջ (գովազդման ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը, որը սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել իրացվող կամ գովազդվող ապրանքի վերաբերյալ կամ օրենքին հակասող գովազդը:

Այսպես, Էդուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» մոլորեցնել բառը բացատրվել է՝ «մոլորեցնել, թյուրիմացության մեջ գցել» իմաստներով, իսկ Աշոտ Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանում» որպես մոլորեցնել բառի հոմանիշներ, ի թիվս, այլնի նշված է «սխալեցնել, ապակողմնորոշել, խաբել, սայթաքեցնել»: Եզրութաբանական վերլուծության ենթարկելով «մոլորեցնել» հասկացությունը՝ կարելի է եզրահանգել, որ տնտեսվարող սուբյեկտի վարքագիծը «հասարակությանը մոլորեցնել» որակելու չափանիշը տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների սպառողական հատկությունների վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող, թյուր, ոչ ամբողջական տպավորության ստեղծումն է հասարակության մոտ:

Օրենքի 11-րդ հոդվածի և 14-րդ հոդվածի համադրված վերլուծության արդյունքում հաշվի առնելով, որ հասարակության մոլորեցումն անբարեխիղճ մրցակցության դրսևորում է և ըստ այդմ՝ կրում է այն բոլոր հատկանիշները, որոնք օրենսդիրն Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում վերագրել է անբարեխիղճ մրցակցությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում որպես հասարակության մոլորեցում դիտարկվող գործողությունների, այդ թվում՝ ապրանքի իրացման ընթացքում թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշելու, պարտադիր հատկանիշը տվյալ գործողության բացասական ազդեցությունն է կամ մրցակից տնտեսվարողների, կամ սպառողի նկատմամբ, որպիսի ազդեցությունը դրսևորվում է վերջիններիս հանդեպ բարեխիղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքների խախտմամբ: Այլ կերպ՝ Օրենքի 14-րդ հոդվածում նշված՝ հասարակության մոլորեցում դիտարկվող գործողությունները կամ անգործությունն ունեն իրենց կոնկրետ հասցեատերը, այն է՝ կամ մրցակցող տնտեսվարողը, կամ սպառողը: Ըստ այդմ՝ Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողությունները կամ անգործությունը կարող են որակվել որպես հասարակության մոլորեցում, եթե տվյալ գործողությամբ կամ անգործությամբ նշված սկզբունքները

խախտվել են կամ մրցակցող տնտեսվարողների, կամ սպառողների հանդեպ: Ըստ այդմ՝ Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողությունները կամ անգործությունը, այդ թվում՝ ապրանքի իրացման ընթացքում թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալներ (տեղեկություններ) նշելը, չեն կարող որակվել որպես հասարակության մոլորեցում, եթե առկա չէ տվյալ գործողության կամ անգործության բացասական ազդեցությունը կրող օբյեկտը՝ մրցակցող տնտեսվարողը կամ սպառողը:

Հաշվի առնելով, որ Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողությունները կամ անգործությունը հասարակության մոլորեցում որակելու համար պարտադիր պայման է այդ գործողությունների կամ անգործության բացասական ազդեցությունը կրող օբյեկտի՝ մասնավորապես, սպառողի առկայությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդպիսով խնդրո առարկա գործողությունները կամ անգործությունը հասարակության մոլորեցում որակելու համար պարտադիր պայման է դառնում նաև այն միջոցը (գործողությունը), որով սպառողն իր վրա է կրում տնտեսվարողի վարքագծի բացասական ազդեցությունը: Այդ միջոցը (գործողությունը) տվյալ ապրանքն սպառողին հասցնելն է, հասանելի դարձնելն է, այլ կերպ՝ ապրանքի իրացումն է:

Ավելին, Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը հասարակության մոլորեցում է դիտարկում ոչ թե ինքնին թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը, այլ նշված գործողությունների կատարումն իրացման ընթացքում: Նշված նորմում «իրացման ընթացքում» ձևակերպմամբ կատարված շեշտադրումից բխում է, որ ապրանքի վերաբերյալ թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը հասարակության մոլորեցում որակելու համար պարտադիր պայման է տվյալ ապրանքի իրացման ընթացքում գտնվելու հանգամանքը: Վերջինս ենթադրում է տվյալ ապրանքի՝ իրացման կետերում գտնվելու փաստի առկայություն:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապրանքի թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը չի կարող որակվել անբարեխիղճ մրցակցության դրսևորում՝ հասարակության մոլորեցում, քանի դեռ բավարար ապացույցների համակցությամբ չի հաստատվել տվյալ ապրանքի իրացման ընթացքում գտնվելու հանգամանքը:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է վերացնել Հանձնաժողովի 05.05.2020 թվականի թիվ 152-Ա որոշումը:

Դատարանը 14.02.2022 թվականի վճռով հայցը բավարարել է՝ այն պատճառաբանությամբ, որ «(...) ՏՄՊ մասին օրենքի 14-րդ հոդվածի իմաստով հասարակության մոլորեցման համար, իսկապես, ապրանքի հասանելիությունը հասարակության համար պարտադիր է: Դա գործողություն է, որ կարող է մոլորեցնել հասարակությանը, ի թիվս այլնի, փնտեսվարող սուբյեկտի առաջարկած ապրանքների վերաբերյալ: Որպեսզի հասարակության անդամների կողմից փնտեսվարող սուբյեկտի առաջարկած ապրանքների վերաբերյալ մոլորեցումը լինի իրական, տվյալ ապրանքը պետք է ներկայացված լինի իրացման:

(...) ո՛չ վիճարկվող որոշմամբ, ո՛չ գործի դատաքննության ընթացքում պատասխանողը չի վկայակոչել որևէ ապացույց այն մասին, որ խնդրո առարկա ապրանքը հասանելի է դարձվել հասարակությանը: Վիճարկվող որոշման հիմքում դրված է Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի գրությունը (...):

Մինչդեռ նշված գրության հիման հնարավոր չէ պնդել, որ հայցվորը ներկայացրել է տվյալ ապրանքը իրացման և այն հասանելի է եղել հասարակության համար: Ավելին, գրությունը նաև պարունակում է տեղեկատվություն այն մասին, որ արտադրանքների մակնշման անհամապատասխանությունը վերացնելու համար տրվել են «Արտադրանքի իրացումը կասեցնելու մասին» կարգադրագրեր: (...) Այն, որ խնդիրը բացահայտվել է փաթեթավորման փուլում և իրավասու վարչական մարմինը կասեցրել է դրա իրացումը, ողջամիտ հետևության է բերում առ այն, որ ապրանքը կարող է և հասած չլինել իրացման կետեր: Իսկ հակառակի մասին ապացույցները բացակայում են:

Ինչ վերաբերում է պատասխանողի այն փաստարկին, որ ապրանքը հասանելի է եղել մասնավոր իրավունքի մեկ այլ սուբյեկտին, դա ինքնին չի վկայում ապրանքի լայն հասանելիության մասին: (...) Այս հանգամանքը ինքնին չէր կարող վարչական մարմնի մոտ վստահություն առաջացնել, որ խնդրո առարկա ապրանքը հաստատապես ներկայացված է եղել իրացման: Վարչական մարմինը պետք է ի պաշտոնե վարչարարական միջոցներ ձեռնարկեր պարզելու համար՝ արդյոք տեսչական մարմնի մատնանշած ապրանքները արձանագրված մակնշման խնդրով հանդերձ հայտնվել են իրացման կետերում, թե՛ ոչ:

Այսպիսով, վիճարկվող որոշմամբ հիմնավորված չէ հայցվորի կողմից ՏՄՊ մասին օրենքի 14-րդ հոդվածի իմաստով հասարակության մոլորեցման եղանակով անբարեխիղճ մրցակցություն դրսևորելու հանգամանքը, ուստի այն ընդունվել է ՎՀՎՎ մասին օրենքի 37-րդ հոդվածի խախտման և ՏՄՊ մասին օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի սխալ կիրառման հետևանքով: (...):»:

Վերաքննիչ դատարանը 21.10.2022 թվականի որոշմամբ Հանձնաժողովի վերաքննիչ բողոքը բավարարել է՝ Դատարանի 14.02.2022 թվականի վճիռը բեկանել և փոփոխել է՝ այն պատճառաբանությամբ, որ «(...) համադրելով հայցվոր Ընկերության կողմից Հանձնաժողովին ներկայացրած հասույթի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ պետական եկամուտների կողմից ներկայացված տեղեկատվության հետ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այս և համանման մյուս ապացույցները ՀՀ վարչական դատարանի կողմից ըստ էության գնահատման առարկա չեն դարձել, որպիսի պայմաններում էլ հասարակության մոլորեցման վերաբերյալ Դատարանը հանգել է սխալ հետևության: Ընդ որում, սույն վարչական գործում առկա են նաև այլ այնպիսի ապացույցներ, ինչպիսիք են Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի արդյունքում կայացված ակտը, «Ավանի աղի կոմբինատ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված փաստերը և այլն:

Անգամ եթե չլինեին վերը նշված ապացույցները, միևնույն է, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ որևէ ապրանքի իրացումը՝ որպես հասարակության մոլորեցման դրսևորման հիմք, չպետք է բովանդակային առումով նեղ մեկնաբանել, քանի որ, տվյալ պարագայում գործ ունենք անձանց կյանքի և առողջության պահպանման հետ, իսկ նման հանգամանքի հաշվառմամբ Վերաքննիչ դատարանը եզրահանգում է, որ նույնիսկ մեկ անձի ձեռքում

հայրենված այն ապրանքը, որն ըստ էության բաղադրության մասին ոչ լիարժեք տեղեկատվություն է պարունակում, կամ առհասարակ նման ապրանքի վրա բացակայում է մակնշումը, պետք է դիտարկել հասարակության մոլորեցում գործողությամբ անբարեխիղճ մրցակցություն: Սույն դեպքում հայցվոր ընկերության կողմից փաթեթավորված կերակրի աղի նմուշը Հանձնաժողովին ներկայացրել է մրցակից կազմակերպությունը, ինչպես նաև այն ձեռք է բերվել և նմուշառման նպատակով փորձաքննության է ուղարկել պետական լիազոր մարմին հանդիսացող Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից:

(...) Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ներկրված աղի խմբաքանակի և ոչնչացման կամ օգտահանման նպատակով պահեստավորված խմբաքանակի միջև առկա բավականին մեծ տարբերության հանգամանքն իր հերթին վկայում է, որ կերակրի աղն ըստ էության սպառվել է՝ արդյունքում մնալով 83 կիլոգրամը, որպիսի պայմաններում Հայցվորն էլ այլ ապացույցներ աղի չիրացման մասով Հանձնաժողովին և տեսչական մարմնին չի ներկայացրել:

(...) Վերաքննիչ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ Հանձնաժողովն իրեն վերապահված լիազորություններն իրականացնելիս առաջնորդվել է, ինչպես «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով նախանշված նպատակներով, այնպես էլ նույն օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ պատասխանատվության կոնկրետ միջոցի կիրառման ժամանակ պարզման ենթակա հանգամանքներով, ըստ այդմ էլ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի ուժով Հանձնաժողովը բացահայտել է քննարկվող գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները»:

Վճռաբեկ դատարանը, գնահատելով Վերաքննիչ դատարանի վերլուծությունների հիմնավորվածությունը, հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Ըստ վարչական վարույթի նյութերի՝ «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ-ն 24.01.2020 թվականին Հանձնաժողովի նախագահին ներկայացրած դիմումով հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության առևտրի ցանցում հայտնվել է Իրանի Իսլամական Հանրապետությունից ներմուծված երկու տեսակի փաթեթավորված աղ, որոնցից մեկը փաթեթավորում է Ընկերությունը՝ «Աղ յոդացված էքստրա» անվանմամբ, մյուսը փաթեթավորում է «Էկոսոլթ» ՍՊ ընկերությունը՝ «Աղ կերակրի յոդացված» անվանմամբ: Երկու նմուշներն էլ շփոթեցնելու աստիճանի նմանեցված են «Ավանի աղի կոմբինատ»-ի կողմից արտադրվող «Էքստրա» աղի փաթեթին, ինչը կարող է ապակողմնորոշել գնորդին: «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ-ն Հանձնաժողով է ներկայացրել նաև Ընկերության և «Էկոսոլթ» ՍՊԸ-ի կողմից փաթեթավորված աղի մեկական նմուշ:

«Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ-ի նշված դիմումի հիման վրա Հանձնաժողովի կողմից հարուցվել է վարույթ:

Վարչական վարույթի ընթացքում Հանձնաժողովի կողմից պահանջվել և ստացվել են, մասնավորապես, հետևյալ փաստաթղթերը.

- ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պատասխան գրությունը, որի համաձայն՝ հիմք ընդունելով «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ-ի տնօրենի դիմում-բողոքը և առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետությունում

ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3.1 մասով, Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի հրամանների հիման վրա Ընկերությունում (ք. Երևան, Շիրակի փ. 1/68) իրականացվել է ստուգում, որի ընթացքում իրականացվել է ներմուծված և փաթեթավորվող կերակրի աղի նմուշառում և տրվել է «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ լաբորատոր փորձարկման՝ կերակրի աղում յոդի զանգված և կալիումի ֆեռոցիանիդ (E536) ցուցանիշներով: (...) Արձանագրված խախտումները վերացնելու համար տնտեսվարող սուբյեկտների պաշտոնատար անձանց տրվել են «արտադրանքի իրացումն արգելելու, շուկայից հետ կանչելու, ոչնչացնելու կամ օգտահանելու մասին» կարգադրագրեր: Հետկանչի արդյունքում Ընկերությունում պահեստավորվել է ոչնչացման կամ օգտահանման ենթակա 83 կգ կերակրի աղ:

- Ընկերության կողմից՝ արդյունաբերական և կերակրի աղի ներմուծման ու իրացման ծավալների և ստացված հասույթի վերաբերյալ տեղեկատվությունը՝ տրամադրված ինչպես Ընկերության, այնպես էլ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից:

Հանձնաժողովի կողմից 05.05.2020 թվականին ընդունվել է «Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 152-Ա որոշումը, որի համաձայն՝ Ընկերության «կողմից փաթեթավորված և իրացված «FAVORITE 1000Գ ԱՂ ՅՈՂԱՑՎԱԾ ԷՔՍՏՐԱ» անվանումով ապրանքի փաթեթավորման վրա ֆեռոցիանիդի (E536) նյութի առկայության վերաբերյալ մակնշման բացակայությունը համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ հասարակության մոլորեցում, քանի որ սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել իրացվող ապրանքների վերաբերյալ»: Ըստ այդմ՝ Հանձնաժողովն Ընկերության կողմից ապրանքի փաթեթավորման վրա ֆեռոցիանիդի (E536) նյութի առկայության վերաբերյալ մակնշում չկատարելը Օրենքի 11-րդ և 14-րդ հոդվածներին համապատասխան որակել է որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ հասարակության մոլորեցում՝ Ընկերությանը տալով նախազգուշացում:

Մաքսային միության հանձնաժողովի 09.12.2011 թվականի ««Սննդամթերքի մակնշման մասին» մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ընդունելու վերաբերյալ» թիվ 881 որոշմամբ հաստատվել է «Սննդամթերքի մակնշման մասին» ՄՄ ՏԿ 022/2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ):

Կանոնակարգի 2-րդ հոդվածով «սննդամթերքի մակնշվածք» հասկացությունը սահմանվում է որպես սննդամթերքի մասին տեղեկատվություն, որը գրառումների, նկարների, նշանների, խորհրդանիշների, այլ նշագրումների և (կամ) դրանց համակցության ձևով զետեղված է սպառողական փաթեթվածքի, տրանսպորտային փաթեթվածքի վրա կամ սպառողական փաթեթվածքին և (կամ) տրանսպորտային փաթեթվածքին ամրացված կամ դրանց մեջ տեղադրված կամ դրանց կցվող տեղեկակրի այլ տեսակի վրա:

Կանոնակարգի 4.1-րդ հոդվածով նախատեսված են փաթեթավորված սննդամթերքի մակնշվածքին ներկայացվող պահանջները: Մասնավորապես, այն պետք է ներառի հետևյալ տեղեկությունները.

«1) սննդամթերքի անվանումը.

2) սննդամթերքի բաղադրությունը՝ բացառությամբ սույն հոդվածի 4.4 մասի 7-րդ կետով նախատեսված դեպքերի, և եթե սննդամթերքի առանձին տեսակների վերաբերյալ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերով այլ բան նախատեսված չէ.

3) սննդամթերքի քանակությունը.

4) սննդամթերքի պատրաստման ամսաթիվը.

5) սննդամթերքի պիտանիության ժամկետը.

6) սննդամթերքի պահպանման պայմանները, (...):»:

Վերոշարադրյալ դրույթների բովանդակությունից հետևում է, որ մակնշումն այն պարտադիր տեղեկատվությունն է, որը բնութագրում է տվյալ ապրանքը, հնարավորություն է տալիս նույնականացնել ապրանքը կամ դրա առանձին հատկանիշները և ապահովել ապրանքախմբերի հսկումը ապրանքաշարժի բոլոր փուլերում՝ այդ տեղեկատվությունը հասցնելով իրական և ապագա սպառողին: Քանի որ փաթեթվածքը ժամանակակից ապրանքների մեծամասնության անբաժանելի մասը և դրանց վերաբերյալ տեղեկատվության կրողն է, մակնշումը տեղադրվում է ապրանքի փաթեթվածքի վրա: Հաշվի առնելով, որ ապրանքի մակնշվածքն արտացոլում է ապրանքի սպառողական հատկանիշների վերաբերյալ տեղեկատվությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապրանքի փաթեթվածքի վրա թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) մակնշման դեպքն առկա է այն դեպքում, երբ բացակայում է տվյալ ապրանքի հատկանիշների վերաբերյալ բավարար անհրաժեշտ տեղեկատվությունը կամ այդ տեղեկատվությունը չի համապատասխանում տվյալ ապրանքի իրական հատկանիշներին:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապրանքի փաթեթվածքի վրա թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) մակնշման փաստն ինքնին բավարար հիմք չէ տնտեսվարող սուբյեկտի վարքագիծն Օրենքի 11-րդ և 14-րդ հոդվածներին համապատասխան անբարեխիղճ մրցակացություն՝ հասարակության մոլորեցում, որակելու համար. անհրաժեշտ պայման է նաև նման մակնշմամբ ապրանքի իրացման ընթացքում գտնվելու հանգամանքը: Ըստ այդմ՝ նման վարքագծի առկայությունը կարող է հաստատված համարվել, եթե բավարար ապացույցների համակցությամբ հաստատվում է նաև տվյալ ապրանքի իրացման ընթացքում գտնվելու հանգամանքը:

Վարչական դատավարությունում ապացույցների գնահատման ու ապացուցման կանոնները սահմանված են հետևյալ նորմերով.

«Վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

«Վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի

հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանը դատական ակտի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի համաձայն՝ եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը: Ապացուցման բեռը կրում է՝ վիճարկման հայցով՝ վարչական մարմինը, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով. (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս գնահատում է ապացույցները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ գործի փաստերն ի պաշտոնե պարզելու գործընթացում դատարանի կողմից ողջամիտ միջոցների ձեռնարկումը չի կարող կրել ձևական բնույթ, այլ նման միջոցների ձեռնարկման դեպքում դատարանը պարտավոր է դրանց կատարման նկատմամբ լինել հետևողական: Իսկ այդպիսի հետևողականության ցուցաբերման անարդյունավետության դեպքում դատարանը պարտավոր է վիճելի մնացած փաստի չապացուցման բացասական հետևանքները դնել այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմի վրա՝ հաշվի առնելով նաև, որ վարչական դատավարությունում վարչական ակտի համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը կրում է այդ ակտն ընդունած վարչական մարմինը (*տե՛ս*, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ «Միքանդ» ՍՊԸ-ի թիվ ՎԴ3/0043/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական դատավարությունում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունն ապացուցելու ծանրությունը՝ ապացուցման բեռը, օրենսդրի կողմից դիտարկվում է որպես գործին մասնակցող անձի դատավարական պարտականություն, որն ապահովված է որոշակի անբարենպաստ հետևանքների առաջացման սպառնալիքով: ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական դատավարությունում բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու բացասական (անբարենպաստ) հետևանքները, ըստ էության, հանգում են հետևյալին. բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայության կամ բացակայության վիճելի մնալու դեպքում դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել հերքված (չապացուցված):

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ վարչական դատավարությունում ապացուցման գործընթացի ճիշտ կազմակերպման, ապացուցողական նյութի լրիվության, վարույթի բնականոն ընթացքի ապահովման և

արդյունքում գործի ճիշտ լուծման համար կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե դատավարության կոնկրետ որ մասնակցի վրա է ընկնում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման ծանրությունը կամ ապացուցման բեռը: Գործին մասնակցող անձանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելու հարցը կարգավորող օրենսդրական նորմերը՝ ապացուցման բեռի բաշխման կանոնները, վճռորոշ նշանակություն են ստանում այն դեպքում, երբ կողմերի ներկայացրած, ինչպես նաև գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (*ex officio*) սկզբունքի իրագործման պայմաններում ձեռք բերված ապացույցները բավարար չեն գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության մասին օբյեկտիվ և հիմնավորված եզրահանգում կատարելու համար: Ըստ այդմ, ապացուցման բեռի բաշխման կանոնները հանդես են գալիս այն կառուցակարգի դերում, որը թույլ է տալիս գործով ձեռք բերված ապացույցների ոչ բավարար լինելու, դրանց հակասականության կամ բացակայության պայմաններում որոշելու այն սուբյեկտին, ով պարտավոր է ներկայացնելու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները հաստատող ապացույցները և պետք է կրի այդ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու բոլոր անբարենպաստ հետևանքները:

Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ուժով միջամտող վարչական ակտն անվավեր ճանաչելու հայցապահանջի (վիճարկման հայց) հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում այդ վարչական ակտի համար հիմք ծառայած փաստերի ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը: Ընդ որում, վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը, ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի, որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում: Հետևաբար միջամտող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված բոլոր ապացույցների հետազոտումից հետո տվյալ վարչական ակտի ընդունման համար հիմք ծառայած որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու դեպքում վարչական դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել հերքված (չապացուցված) (*տե՛ս, Սիրանուշ Վարդանյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0634/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշման ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն Ընկերության կողմից խնդրո առարկա ապրանքի իրացման փաստը հաստատված է համարել հետևյալ անուղղակի ապացույցների գնահատման արդյունքում.

- «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից Հանձնաժողով ներկայացված՝ Ընկերության կողմից փաթեթավորված աղի տուփը. ըստ Վերաքննիչ դատարանի՝ «նույնիսկ մեկ անձի ձեռքում հայտնված այն ապրանքը, որն ըստ էության բաղադրության մասին ոչ լիարժեք տեղեկատվություն է պարունակում, կամ առհասարակ նման ապրանքի վրա բացակայում է

մակնշումը, պետք է դիտարկել հասարակության մոլորեցում գործողությամբ անբարեխիղճ մրցակցություն»:

- ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պատասխան գրությունն առ այն, որ Ընկերությունում արձանագրված խախտումները վերացնելու համար տրվել են «Արտադրանքի իրացումն արգելելու, շուկայից հետ կանչելու, ոչնչացնելու կամ օգտահանելու մասին» կարգադրագրեր: Ի կատարումն կարգադրագրերի՝ հետկանչի արդյունքում Ընկերությունում պահեստավորվել է ոչնչացման կամ օգտահանման ենթակա 83 կգ կերակրի աղ:

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի պատասխան գրությունն առ այն, 25.12.2020 թվականի դրությամբ Ընկերության կողմից Հայաստանի Հանրապետություն է ներկրվել 23922 կգ քաշով կերակրի աղի խմբաքանակ: Ըստ Վերաքննիչ դատարանի՝ «ներկրված աղի խմբաքանակի և ոչնչացման կամ օգտահանման նպատակով պահեստավորված խմբաքանակի միջև առկա բավականին մեծ տարբերության հանգամանքն իր հերթին վկայում է, որ կերակրի աղն ըստ էության սպառվել է՝ արդյունքում մնալով 83 կիլոգրամը, որպիսի պայմաններում Հայցվորն էլ այլ ապացույցներ աղի չիրացման մասով Հանձնաժողովին և տեսչական մարմնին չի ներկայացրել»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վերը նշված նորմերին ու ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներին համապատասխան գնահատելով ինչպես վերը նշված, այնպես էլ գործում առկա մյուս ապացույցները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից խնդրո առարկա ապրանքի իրացման ընթացքում գտնվելու փաստը հաստատված է համարվել միայն անուղղակի ապացույցներից բխող ենթադրությունների հիման վրա: Գործում առկա չէ որևէ ուղղակի ապացույց, որը կհաստատեր Ընկերության կողմից առանց ֆեռոցիանիդի մակնշման փաթեթվածքով աղի իրացման ընթացքում, մասնավորապես, իրացման կետերում գտնվելու հանգամանքը, որպիսի հանգամանքի ապացուցման բեռը սույն գործով պատասխանողին է:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի համար էական նշանակություն ունեցող փաստը՝ Ընկերության կողմից առանց ֆեռոցիանիդի մակնշման փաթեթվածքով աղի իրացման ընթացքում գտնվելու հանգամանքը մնում է չապացուցված, ինչի բացասական հետևանքը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան, պետք է կրի պատասխանող վարչական մարմինը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, ոչ բավարար ապացույցների հիման վրա հաստատված համարելով Ընկերությանը վերագրված խախտման փաստի առկայությունը, թույլ է տվել Օրենքի 14-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի խախտում:

Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատրասխանում բերված փաստարկները:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և Դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության կողմից վճռաբեկ բողոքի համար վճարվել է 20.000 ՀՀ դրամ, և քանի որ Ընկերության կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով, ենթակա է հատուցման Հանձնաժողովի կողմից:

Միաժամանակ, վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի կազմում ներառել է նաև ներկայացուցիչների վճարները:

Սույն գործով վճռաբեկ բողոքին կից ներկայացվել է «ՖԱՎՈՐԻՏ 19» ՍՊԸ-ի (Պատվիրատու) և վերջինիս ներկայացուցիչ Լուիզա Ռաֆիկի Հովհաննիսյանի (Կատարող) միջև 24.03.2023 թվականին կնքված «Ծառայությունների վճարովի մատուցման» պայմանագիրը, որի 1.1 կետով սահմանվել է, որ Կատարողը մատուցում է հետևյալ իրավաբանական ծառայությունները, այն է՝ թիվ ՎԴ/4139/05/20 վարչական գործով վճռաբեկ բողոքի ներկայացում: Կողմերի համաձայնությամբ պայմանագրի գին է սահմանվել 200.000 ՀՀ դրամը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է փաստաբանի վարձատրության խելամտության և բռնագանձման հարցերին: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը (*տե՛ս, Ֆերդինանտ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պետրոսյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը*):

Վերը նշված դիրքորոշման լույսի ներքո հաշվի առնելով սույն գործով ներկայացուցչի կատարած աշխատանքի ծավալը՝ վճռաբեկ բողոքը կազմելն ու ներկայացնելը, գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը) և այն համադրելով գործում առկա՝ «ՖԱՎՈՐԻՏ 19» ՍՊԸ-ի և վերջինիս ներկայացուցիչ Լուիզա Ռաֆիկի Հովհաննիսյանի միջև 24.03.2023 թվականին կնքված «Ծառայությունների վճարովի մատուցման» պայմանագրով սահմանված վճարման ենթակա գումարի չափի հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ողջամիտ է պատասխանողից հօգուտ «ՖԱՎՈՐԻՏ 19» ՍՊԸ-ի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ ատյանում գործի քննության հետ կապված ներկայացուցչի խելամիտ վարձատրության հատուցման ենթակա գումար: Ինչ վերաբերում է ՀՀ վարչական դատարանում գործի քննության հետ կապված ներկայացուցչի վարձատրությանը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրան անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրինական ուժ է տրվում ՀՀ վարչական դատարանի վճռին, որով լուծվել է նաև հայցվորին վճարվելիք դատական ծախսի հարցն ու պատասխանողից հօգուտ հայցվորի բռնագանձվել է 120.000 ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 21.10.2022 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 14.02.2022 թվականի վճիռն:

2. Մրցակցության պաշտպանության հանձնաժողովից հոգուտ «ՖԱՎՈՐԻՏ 19» ՍՊԸ-ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Մրցակցության պաշտպանության հանձնաժողովից հոգուտ «ՖԱՎՈՐԻՏ 19» ՍՊԸ-ի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ վճռաբեկ դատարանում ներկայացուցչի վճարի հատուցման ենթակա գումար:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող _____ **Հ. ԲԵԴԵՎՅԱՆ**

Զեկուցող _____ **Լ. ՀԱԿՈԲՅԱՆ**

_____ **Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

_____ **Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ**

_____ **Ք. ՄԿՈՅԱՆ**